**ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ**
**կնքված պայմանագրում կատարված փոփոխությունների մասին**

Դատական դեպարտամենտը ստորև ներկայացնում է իր կարիքների համար ավտոմեքենաների վերանորոգման ծառայությունների ձեռքբերման նպատակով կազմակերպված «ԴԴ-ԳՀԾՁԲ-19/05» ծածկագրով գնման ընթացակարգի արդյունքում 2019 թվականի օգոստոսի 06-ին կնքված N ԴԴ-ԳՀԾՁԲ-19/05-2 պայմանագրում 2019 թվականի դեկտեմբերի 13-ին կատարված փոփոխությունների վերաբերյալ համառոտ տեղեկատվությունը և կատարված փոփոխությունը պարունակող՝ երկկողմ հաստատված փաստաթղթի պատճենը:

Փոփոխության առաջացման պատճառ՝

Անհրաժեշտություն է առաջացել ավելացնել Պայմանագրով նախատեսված ծառայությունների ծավալները:

Փոփոխության նկարագրություն՝

Պայմանագրի 4.1 կետում «2 700 000 (երկու միլիոն յոթ հարյուր հազար) ՀՀ դրամ» բառերը փոխարինվել է «2 970 000 (երկու միլիոն ինը հարյուր յոթանասուն հազար) ՀՀ դրամ» բառերով, Պայմանագրի «ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ» վերտառությամբ Հավելված N 2-ը հաստատվել է նոր խմբագրությամբ:

Փոփոխության հիմնավորում՝

Պայմանագրի 7.5 կետ:

Պատվիրատու՝ **Դատական դեպարտամենտ**

## ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ N 1

### ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԱՎՏՈՄԵՔԵՆԱՆԵՐԻ ՎԵՐԱՆՈՐՈԳՄԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ 06.08.2019թ. ԿՆՔՎԱԾ N «ԴԴ-ԳՀԾՁԲ-19/05-2» ՊԱՅՄԱՆԱԳՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ք. Երևան «13» դեկտեմբերի 2019թ.

Դատական դեպարտամենտը, ի դեմս ղեկավար Կ. Փոլադյանի, որը գործում է Դատական դեպարտամենտի կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և «ԱՎՏՈ ՓԱՐԹՍ» ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Ա. Պիվազյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կատարող), մյուս կողմից, երկուսը միասին (այսուհետ՝ Կողմեր), ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական օրենսդրությամբ, պահպանելով գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ սահմանված պայմանները, և հիմք ընդունելով 06.08.2019թ. կնքված N «ԴԴ-ԳՀԾՁԲ-19/05-2» գնման պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) 7.5 կետը՝ փոխադարձ համաձայնությամբ կնքեցին սույն համաձայնագիրը՝ հետևյալի մասին.

### 1. ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

Կողմերը որոշեցին ավելացնել Պայմանագրով նախատեսված ծառայությունների ծավալները, ինչով պայմանավորված՝ Պայմանագրի 4.1 կետում «2 700 000 (երկու միլիոն յոթ հարյուր հազար) ՀՀ դրամ» բառերը փոխարինել «2 970 000 (երկու միլիոն ինը հարյուր յոթանասուն հազար) ՀՀ դրամ» բառերով, Պայմանագրի «ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ» վերտառությամբ Հավելված N 2-ը հաստատել նոր խմբագրությամբ՝ համաձայն սույն համաձայնագրի հավելված N 1-ի:

### 2. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

2.1. Սույն համաձայնագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը:

2.2. Սույն համաձայնագրում չնշված՝ Կողմերի՝ Պայմանագրով նախատեսված իրավունքներն ու պարտականությունները թողնվում են անփոփոխ:

2.3. Սույն համաձայնագիրը կազմված է 2 էջից, կնքվում է հայերեն լեզվով, երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, և յուրաքանչյուր Կողմին տրվում է մեկական օրինակ: Սույն համաձայնագրի հավելված N 1-ը հանդիսանում է N 1 համաձայնագրի անբաժանելի մասը:

### 3. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ ԵՎ ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ

| ՊԱՏՎԻՐԱՏՈՒ | ԿԱՏԱՐՈՂ |
|---|---|
| ***Դատական դեպարտամենտ*** | ***«ԱՎՏՈ ՓԱՐԹՍ» ՍՊԸ*** |
| Հասցե՝ ք. Երևան, Վազգեն Սարգսյան 5 | Հասցե՝ ք. Երևան, Գայի պողոտա 12/2 |
| Հ/Հ՝ 900011192151 | Հ/Հ՝ 2472302323880000 |
| ՀՎՀՀ՝ 02583241 | ՀՎՀՀ՝ 00880859 |
| ՀՀ ՖՆ գործառնական վարչություն | «Արդշինբանկ» ՓԲԸ |
| Ղեկավար՝ Կ. Փոլադյան | Տնօրեն՝ Ա. Պիվազյան |
| (ստորագրություն) | (ստորագրություն) |
| Կ.Տ. | Կ.Տ. |

**Հավելված N 1**

**« 13 » դեկտեմբերի 2019 թ. կնքված N 1 համաձայնագրի**

*(Հավելված N 2*
*06.08.2019 թ. կնքված*
*«ԴԴ-ԳՀԾՁԲ-19/05-2» ծածկագրով պայմանագրի)*

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

| Ծառայության | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| հրավերով նախատեսված չափաբաժնի համարը | գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV) | անվանումը | դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2019 թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում | | | | | | |
| | | | հուլիս | օգոստոս | սեպտեմբեր | հոկտեմբեր | նոյեմբեր | դեկտեմբեր | Ընդամենը |
| 1. | 50111130/21 | HYUNDAI 1,6 մակնիշի ավտոմեքենայի վերանորոգման ծառայություններ | 810 000 | 810 000 | 810 000 | 1 350 000 | 1 350 000 | 1 521 500 | 1 521 500 |
| 2. | 50111130/22 | HYUNDAI 1,8 մակնիշի ավտոմեքենայի վերանորոգման ծառայություններ | 720 000 | 720 000 | 720 000 | 1 200 000 | 1 200 000 | 1 298 500 | 1 298 500 |
| 7. | 50111130/27 | KIA Cerato (սեդան) մակնիշի ավտոմեքենայի վերանորոգման ծառայություններ: Մեքենայի շարժիչի աշխատանքային ծավալը՝ 1.6լ. | 90 000 | 90 000 | 90 000 | 150 000 | 150 000 | 150 000 | 150 000 |

* *Վճարման ենթակա գումարները ներկայացվում են աճողական կարգով:*

**ՊԱՏՎԻՐԱՏՈՒ**
***Դատական դեպարտամենտ***
Հասցե՝ ք. Երևան, Վազգեն Սարգսյան 5
Հ/Հ՝ 900011192151
ՀՎՀՀ՝ 02583241
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն

Ղեկավար՝ Կ. Փոլադյան

/ստորագրություն/
Կ.Տ

**ԿԱՏԱՐՈՂ**
***«ԱՎՏՈ ՓԱՐԹՍ» ՍՊԸ***
Հասցե՝ ք. Երևան, Գայի պողոտա 12/2
Հ/Հ՝ 2472302323880000
ՀՎՀՀ՝ 00880859
«Արդշինբանկ» ՓԲԸ

Տնօրեն՝ Ա. Պիվազյան

/ստորագրություն/
Կ.Տ